




ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳ-ԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 43

ՀԱՐԱՐԱԹ

23 ՅՈՒՆԻՍ 1907

ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ



ԶԵՆԻԹ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիսարանին. 1903

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ. — Անդամ Ժիւռի. Միլան. 1906

ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԳԶ. ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԲՈՑ ՀԱՄԱՐ.

Գ. ՄԱՐԳԻՍՅՈՑ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրթա-
ներու եւ գոհարեղէններու

ԹԻԻ 16 = ՊԱՀՃԷ-ԳԱԲՈՒ = ԹԻԻ 16

Օռոգարի-Պաք հաստատութեան գլխաւոր

Ի Բերա, կ'գտնուի գոհարավաճառ. Տ. Տ. ԷՔՄԷՔՃԵԱՆ ԵՂԲԱՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց.


ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ ԶԵՆԻԹ

(آ. آصاوریان) شرکت صتییه مطبوعه — باب طای جاده سنده نو سو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշր-Ալի հասցեսի թիւ 52

Հատր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
 Բիլամգրամայն մեքենաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Ինտրօդուստրի գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅՐԻՉ ԿԱՅԾ. ՓԱՆԾԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւորութեամբ,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՈՒՄԱՆ
 ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՒՑԱՐ | Չարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր զաւառներու բոլոր ֆաբրիկաներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
 343 կրկին , Տիւզդուլուի տունը :




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 43

ՇԱՐԱԹ

23 ՅՈՒՆԻԱ 1907



ՆՉԻԱ ՏԵՄԵՐԱԴՊԱՆԵԱՆ

Ուրախութեան լուր մը մեզ կը պարտաւորէ մեր անգուգական Եղիային պատկերը դնել քերքիս մէջ, այն է իր տակաւ ապրաքննութիւնը: Անոյց աղբիւրէ կը տեղեկանանք որ ինքը սկսած է ուսել խմել եւ խօսիլ: Ան ու վեց ամիս շարունակ իմաստութեան աղբիւրը եղող բերանը գոցած էր, հիմա կը բացուի: Երանի բէ մամուլը առիքը ունենաւ կրկին գրկել իր ամուլ ծոցին մէջ անոր այնքան բնական գրութիւնները որոնք Աւետարանի էջերուն պէս նուիրական պիտի ըլլան հանրութեան համար:

ԴԵՊԻ ՍԿԻՏԱՐ

Իւսկիւտար՝ . . . :

Ամէն անգամ որ այդ անունը կ'արտասանեմ և կամ անոր վրայ կը խօսին ինծի, չեմ գիտեր ինչո՞ւ համար աչքիս առջեւ անպատճառ կը ներկայանայ . . . Սահարան:

Երբ միտքս կուգայ իր անծայր, անհատնում վերելքը, իր փակչուն, աներես փոշին և կառապանները (ածականները չի կրկնելու համար), երբ աչքիս առջեւ կը բերեմ այն յուսահատ, յոռետես արարածներն որք Իւսկիւտարի ձիերն են — խեղճ, ողորմելի էակներ, որք այնքան բան կը քաշեն՝ (կառքէն զատ) մղելու համար գրաստական struggle for life-ը, — կ'որոշեմ երբէք չի վերադառնալ հոն:

Գինին շատ հաճոյք կը պատճառէ, պիտի ըսէք, Ամերիկեան քօլէճն ալ անանկ է:

Մէկ շաբթուան մէջ երկու անգամ գացի հոն: Տօքթ. Բաթրիքի շնորհալի հրաւերները այնքան բան կը խոստանան:

Յուսախաբութիւնն ազահովապէս այդ կրթական փառաւոր շէնքին վրայ չէ որ կը սաւառնի:

* * *

Անշուշտ Տօքթ. Բաթրիք պիտի ներէ ինծի գիտել տալ իրեն, թէ որքան որ իր վարած այդ հոյակապ հաստատութիւնը թանկագին ծառայութիւններ կը մատուցանէ Պուսոյ բազմատեսակ հասարակութեան՝ սքանչելի կերթութիւն մը տալով անոր աղջիկներուն, միւս կողմէ շատ աւերիչ, շատ աննպաստ երեւոյթ մը առաջ կը բերէ Իւսկիւտարի մէջ մանաւանդ: Եթէ ես Իւսկիւտարցի ըլլայի, — ինչ մեղքս պահեմ, — շատ չպիտի ուզէի որ այդ դպրոցը հոն հաստատուած ըլլար:

Բայց այս դպրոցը պարզապէս պատճառ կըլլայ որ անտանելի կերպով աներես, անամօթ ըլլան Իւսկիւտարցիներէն կարգ մը կառապանները:

Ամէն անգամ որ հանդէս կայ հոն, հինգ զրուշի course մը քսան զրուշի ընելու կը դատապարտեն զքեզ, այնքան բազմութիւն կերթայ: Եթէ մխիթարուելու կէտ մը կայ,

այն ալ մտածելն է թէ Շիրքէթն ալ կառապաններուն պէս չըներ, բացառաբար և բարեալդարար:

* * *

Բարիդ իր Կռան Բուին ունի. Իւսկիւտար՝ Հոմ Գօլէճի պարգեւաբաշխութիւնը: Երկուքն ալ Յունիս ամսոյ մէջ:

Պաղլար-Պաշին, Իճատիէն, Գուզկուն՝ ճուքը և Արապղատէն, առանց մոռնալու «Վանքին-Պաղը», ամէնքն ալ այդ օրը Սէլամըզի կողմը կը թափին:

Պատուհաններու մէջ, տուներու առջեւ, ամէն տեղ գլուխներ կը շարժին, չըջագետներ կը տատանին և բերաններ կը շաղկրատեն:

Շարժուն բանօրամա մը Իւսկիւտարի գեղեցկագոյն մասին՝ կրնարուն: Որքան ալ կայ, Աստուած իմ:

Արդէն կամուրջին այն մասին վրայ, ուր այդ գեղի շոգենաւերը կը փակին, կը հասկընաս որ Իւսկիւտար տարբեր բան մը կ'անցնի կոր:

Շոգենաւերը լեցուն են այնպիսի բազմութեամբ մը՝ որուն սովորաբար հանդիպելու վարժուած չես:

Երբ մէկը որ Իւսկիւտարցի չէ, ոտքը կը դնէ այդ գիւղին նաւամատոյցը, Հոմ Գօլէճ երթալու համար, ծովեզերքէն սկսեալ մինչեւ այդ դպրոցին դուռը, ամէն բան, նաւամատոյցը, ջրավաճառը, գետնին քարերը, լուստրօճին, կառապանը, ձիերը, խանութպանները, պատուհանները, փոշին, արեւն անգամ, անանկ երեսդ կը նային որ կարծես հեգնոտ կերպով մը ձեզի ըսել կուզեն:

— Ձեր տեղը Հոմ Գօլէճ կա՞յ:

Եւ իրաւունք ունին:

Շատ անգուրթ բան պիտի ըլլար՝ եթէ Հոմն ալ հոն չըլլար:

* * *

Եւ վերջապէս վարժարանին դրան առջեւ կը գտնես ինքզինքդ ողջ առողջ: Յոգնած՝ — կառքով եկած ըլլալուդ համար — քրտնած՝ չի քալելուդ համար — վրադ գըլուխդ փոշիով ներկուած, փողկապդ խանգարուած, գլխարկդ մէկ կողմ, թաշկինակդ աններկայանալի վիճակի մէջ. գունատ, յուսահատ, կը մտնես ներս:

Առաջին գործը կըլլայ նայիլ և ստուգել թէ ոսկորներդ ամբողջովին իրենց տեղն են :

Ան ինչ վերելք, ինչ ճամբայ : Փակագիծի մէջ ձեզի բան մը ըսեմ — և ասոր վըստահ կրնաք ըլլալ : Եթէ այսօր մէկը ինծի ըսէ. « — Եկո՛ւր, տասը հազար ոսկիով քեզի աղջիկ մը տանք, պայմանաւ որ Իւսկիւտար բնակիս » անպատճառ պիտի մերժէի :

Թէ կին առնուլ և թէ Իւսկիւտար բնակիլ, մինակ մէկ մարդու համար շատ տանջանք չէ՞ :

Ատկէ աւելին կայ :

Հանդէսին առտուն կարտէնիա մը կառնեմ թարմ, ձերմակ, մաքուր, դեռ ցօղը վրան և պղծոնիէնիս կանցընեմ :

Հոմ Գօլէճի դրան առջեւ, մարած, դեղնած, սմբած, չորցած էր կարտէնիաս. ես որ չորս օր չարունակ կրցած եմ գործածել այդ ծաղիկը գրիթէ իր բրցուած վիճակին մէջ :

Օ՛հ, անտանելի է ասիկա :

* * *

Ալ ներսն ենք :

Անգամ մը որ սանդղակներէն վեր կելլես, ամէն բան կը մոռնաս հոն, մինչեւ անգամ Իւսկիւտարի մէջ գտնուիլդ, ինչ որ պզտիկ սիւտիանք չէ :

Դրախտի անկիւն մըն է այդ դպրոցը, իր պարտէզովը, դիրքովը և ծաղիկներովը :

Ներսը, դրախտին շարունակութիւնն է. մաքրութիւն, կարգ կանոն մը, լուսթիւն մը, ամփոփում մը կը տիրէ հոն, որ ներս մտնողը՝ դուրս ելլելու շատ տրամադիր չի գտնուիր :

Եւրոպական ժամը երկուքն է :

Սրահը արդէն վերէն վար լեցուն է :

Առանց աղմուկի՝ շարժում, և առանց իրարանցումի՝ ոգեւորութիւն, կարծես միայն անկո-ամերիկեան հանդէսներու տրուած է : Այդ հարիւրաւոր բազմութիւնը, լարուած ժամացոյցի մը պէս կը նստի, կելլէ, կը տեղափոխուի, կառաջնորդուի առանց շշուկի, անձայն :

Խորհրդաւոր և պատկառելի չը գիտեմ ինչ մը կայ այդ միջավայրին մէջ, որմէ կը նախանձիմ, նոյնը մենք եւս չի կրնալ ընելնուս վրայ :

Ի՞նչ վերջ նուագախումբը՝ հանդէսը կը բանայ :

Ամէն մարդ իր տեղն է, լուռ ու մունջ : Եւ անա սրահէն ներս կը մտնեն խումբ մը դեռատի օրիորդներու :

Վարժարանին նախկին չրջանաւարտուհիներն են, որք կուգան իրենց յատուկ տեղը նստիլ : Շրջանաւարտուհիներ՝ որոնց բոլորտիքը որքան օրջան ընէ մարդ՝ այնքան չուզեր որ աւարտի :

Երաժշտական հատուածէ մը և միւս չրջանաւարդ օրիորդներու կողմէ արտասանուած ճառերէ ետք՝ Տօքթ. Բաթրիք կարճ ատենախօսութիւն մը կընէ չրջանաւարտուհիներու ուղղուած, որմէ ետք իր ձեռքով անոնց կը յանձնէ իւրաքանչիւրին վկայականը :

Երբ ասոնք ալ կը տեղաւորուին, նուագախումբը Մօճարդի մէկ սքանչելի ֆեմդեդը կը զարնէ, և անա կսկսին կարգաւ իրարու յաջորդել ճառերը, նուագները, մինչեւ այն ատեն՝ երբ զանգալը կը հնչէ աշակերտ և ոչ աշակերտ դուրս ելլալու համար :

* * *

Դպրոցական հանդէսէն անմիջապէս վերջը աշխարհիկ ընդունելութիւն մը տեղի կ'ունենայ Տօքթ. Բաթրիքի կողմէ տեսչութեան յատուկ սրահներուն մէջ :

Ամէն մարդ պարտականութիւն մը կը զգայ սեղմել այդ արժանաւոր տեսչուհոյն ձեռքը և շնորհաւորել զինքը այդպիսի յաջողակ աշակերտներ հասցուցած ըլլալուն, որոնք մէյ մէկ զարդեր են այն ընկերութեան որուն կը պատկանին :

Տօքթ. Բաթրիք յուզուած, իր սովորական խնդում երեսով կը բազմապատկուի ամէն մէկուն պատասխանելու և հաճելի բառ մը հասցնելու համար :

Ոսկեգոյն անգլուհիներ, գեղանի հելլենուհիներ, շուշանաթոյր պուլկարուհիներ և շնորհալի հայուհիներ՝ իրարու խառնուած՝ անանկ հաճելի խումբ մը կը կազմեն, որու մէջ գտնուիլ երանութիւն մ'է պարզապէս :

Ե. ԱԼՓԻՍԸ

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Սկիւտարի ստիակին՝ Թէոդիկի «Ամենուն Տարեցոյցը» տուն կուտայ ինձ հրապարակել նամակ մը՝ զոր իմ ընկերուհիներէս միոյն հասցէին դրած, պահարանը դոցելէ առաջ Հանրագիտակցին կուտամ, ինչպէս ըսի, գործածելով այդ վերնագրին մէկ բեկորը «ամենուն նամակը»:

Հոգիս,

Վերջին նամակիդ մէջ, զոր դեռ երէկ ձեռքս հասաւ, տխուր լուր մը կուտաս յանձին երուանդին՝ որ ալ չի գար քեզ տեսնելու, և թէ դադրեցուցած է իր այցելութիւնները...

Տրամեցար, սիրտ ըրիր այս անակնկալ յուսախաբութենէդ... այո՞...:

Տրամութիւններ, ցաւեր կան՝ որոնք ուրախութեան ծնունդ կուտան, ինչպէս ցաւ քաշող մայր մը:

Երուանդը այլ եւս դադրեցուցեր է իր վիզիթները, և դուն՝ որովհետեւ կեանքիդ գարունին մէջ առաջին անգամը ըլլալով կը հանդիպիս արմատախիլ փոթորիկի մը, կը ցաւիս, կափառասա և կը զրեւ ինձի, իբր թէ մեծ աղէտ մը, անակնկալ դէպք մը պատահած ըլլար:

Կը խնդամ հոգիս, աղու մը պէս կը զուարճանամ, հիմա ձեռքիս մէջ բռնած նամակդ և կարդալով տողեր՝ որոնք թերեւս դողերու մատնած են քեզ:

Գիտնալու, կարգացած ըլլալու եւ անպատանելու մէջ ճամբորդներու մասին, որոնք օրուան արեւին տակ, տաք աւաղին վրայ անդադրում ճամբորդելէ յոգնած ու պարտասած, ահդ տեղ կը հանդիպին ովասիաներու, և այդ փունջ մը ծառերու շուքին տակ ապաստանելէ, կշտանալէ, սթափելէ վերջ՝ կրկին ճամբայ կիջնան իրենց բուն նպատակակէտին հասնելու համար, իրենց ետին ձգեցնելով պահ մը առաջուան շուքը, ծառերը և հանգստութիւնը:

Դուք անխորձ աղջիկներ, օրուան երի-

տասարդներուն համար նոյնն էք, ինչ որ են՝ ովասիաները անապատի ճամբորդներու համար: Անոնք, այսինքն խել խօլ տղաքը մինչեւ իրենց ամուսնութեան օրը, որ իրենց նպատակակէտն է, անապատի ճամբորդներու պէս են, դուք ինչպէս ըսի, ովասիաներն էք, անոնք ձեր մօտը կուգան ապաստանիլ, պահ մը հովահրելու, ժամանակ անցընելու համար, և անգամ մը որ ձգեն, մեկնին, ալ չեն յիշեր, ետինն անգամ չեն դառնար, ինչո՞ւ... որովհետեւ ձենէ աւելի գեղեցկին հանդիպելու գաղափարը, յոյսը ունին անոնք:

Այսպէս է օրէնքը հոգիս այն կեանքին, որուն առաջին քայլերը կառնես քու մօտը աշտարիքիդ մէջ:

Առաջին անգամ քեզի պատահած այս տխուր պարագան, թերեւս ուրիշներ շատ աւելի ստէպ հանդիպած ըլլան, անոնք աւելի զիւրին կը տանին, բայց դուն քու անփորձութեանդ մէջ, գիտեմ թէ ինչ ծանր ու ճնշող ազդեցութիւն մը բրած է վրադ:

Հիմա դուն այդ վիճակիդ մէջ կը նմանիս այն օրիորդին որ, վկայականը ձեռքը գործնական կեանքին մէջ կը նետուի, սերտած ուսած այն բոլոր գիտելեաց գաղտնիքները, որոնք տեսականօրէն թէ գործնականօրէն ուսած է վարժարանին մէջ:

Հիմա ո՞ր եւ է երիտասարդ դիւրաւ չպիտի կրնայ զքեզ խաղալիք ընել իր քաբուսներուն, ո՞ր եւ է անհատ այլ եւս չպիտի համարձակի օգտուիլ քու միամտութենէդ: Դուն, կուսիթէն ալ ամուր պիտի ըլլաս անոնց հանդէպ, և քու որաիդ դռները երկաթ կըղպանքներով գոց պիտի գտնեն անոնք, դուն անոնց վրայ պիտի խնդաս, անոնք գարգաս պիտի ընեն քեզի, մինչ քու փորձառութիւնդ զքեզ պիտի զսպէ և թոյլ չպիտի տայ որ քու մատղաշ սիրտդ հրահրի արձակուած կայծերէն:

Իմ մասիս պէտք է ըսեմ որ ուրախ եմ, անհունս երջանիկ, լսելով քու իսկ խոստո-

վանութիւնդ, որով կիմացնես երուանդին լքումը:

Քեզ համար շանթող այդ լուրը՝ ինձ համար բարեբեր անձրևի ազդեցութիւն ունի, որով պիտի ուռճանաս, ծլիս, ծաղկիս, և հսկայ նոճիներու պէս պիտի կրնաս այլ եւս տոկալ ամէն հովի, ամէն փոթորիկի, ամէն սպառնական ճախողութեան:

Երուանդը իր չարակամ ընթացքովը, քեզի բարիք մը, խրատ մը տուեր է, զոր չգիտեր ապուշը:

Երիտասարդի մը համար աղջիկ մը գլխէ հանելը՝ սիկառ մը ծխելու չափ սովորական և դիւրին բան մըն է, և փոխադարձաբար, աղջկան մը համար երիտասարդէ մը պաղիւը, զգուշիւ և զայն մոռնալը տէ՛մօտէ գլխարկի մը պէս ըլլալու է, մոռնալու է, մոռնալու, լքելու է աւելի յարմարագոյնը, պատշաճը ընտրելու պայմանաւ:

Հոգիս, կը խրատեմ քեզի, որպէս զի սիրես ու սիրուիս, սէր չունեցող, սէր չի կրող աղջիկ մը ինձի համար կը նմանի անոր որ, լեզու ունի՝ չի խօսիր, ականջ ունի՝ չի լսեր: Սէրը մեր մէջ է՝ն բնական զգացումն է, զայն բռնադատել, և կուրծքին տակ թագուն պահելը՝ կրնամ ըսել թէ մեղք իսկ է, սակայն... պէտք է սիրել մէկը, և սիրուիլ անանկ մէկէ մը՝ որ կուշտ ըլլայ, բոլորովին յափրացած երիտասարդ կիանքին շուռլուծութիւններէն, և որոշած՝ կեդրոնացնել իր սէրը մէկ սրտի մէկ անձի մէջ:

Երուանդը այս կարգէն չէր՝ պէտք է ըսել, անիկա նոր թեւ առած թռչունին կը նմանէր որ հագիւ թռչիւր սովորած՝ անդադրում կը թռչի ոստէ ոստ յատկաւորով, փափաքին գոհացում տալու համար: Երուանդն ալ ասանկ էր հոգիս. դեռ նոր զգացած էր իր մէջը այն մղումը, այն հոսանքը զոր իր տարիքը ունեցողներու մէջ նոր կ'արթննայ և անոր տաք ու թարմ ազդեցութիւնն իսկ կսկսին ուստոստել ու թռիլ բոլոր այն ճիւղերուն վրայ որոց կը հանդիպին զերածու խել խօլ վաղըին ու թռիչքին մէջ:

Դուն ինչ կարեկցութիւն և մխիթարանք կ'ըսպասես, մինչ ես քարոզ կը կարդամ, չէ՞ հոգիս...

Դուն ինձմէ կ'սպասէիր թերեւս որ, ան-

միջապէս քովդ վազեմ սրբեմ արցունքներդ, և իբր սրտիդ արտակից ու վշտիդ վշտակից, միջոցներ խորհիմ իբրեւ մեծ քոյր, երուանդը նորէն քեզի մօտեցնելու, նորէն հրահրելու անոր մարած սէրը քզւ մէջդ:

Ասանկ պիտի ընէր, այո, այն ընկերուհին որ զքեզ սրտանց չը սիրեր, չի գուրգուրար վրադ, և լոկ ժամանցի մը համար կը տեսնուի հետդ: Բայց գիտցիր որ ես ատնցմէ չեմ, այդ կարգի բարեկամութիւն մը չէ իմս, և քեզ հանդէպ մնուցած սէրս աւազէ հիմ չունի:

Ծերերը շատ անգամ կ'ըսեն, մինչեւ որ մայր մը զաւակ մը չի թաղէ, մայր չըլլար: Ու ես նոյն բանը պիտի կրկնեմ քեզի, մատղաշ աղջիկ մը իր կեանքի գարունին մէջ մինչեւ որ իր առաջին տղայ սէրէն չի պսղի չի լքուի, կատարելութեան չի կրնար հասնիլ: Հիմա դուն կատարեալ ես հոգիս, հիմա դուն փորձ աղջիկ մընես պէտք է ըսել, որ ալ խաբուելու՝ տեղի տալու վախը չունիս: Այլեւս չպիտի ժպտիս, երեսդ նայող ծանօթ թէ անծանօթ դէմքերու, այլեւս սիրտդ չի պիտի յուզուի իրենց արտաքինովը փափկող երիտասարդներուն ի տես, այլեւս հոգիդ չպիտի խռովի այն ամէն նայուածքներէն, որոնք վարպետ որսորդի մը նշանառութեան կը նմանին:

Երանի քեզի որ այս տարիքիդ մէջ իսկ կատարելութեան հասար, այս տարիքիդ մէջ սիրտդ ու սէրդ դիւրաւ կրնան ձեւ փոխել այնքան խմոր են անոնք, որովհետեւ վաղը տարիքներու ընթացքին մէջ երբ պատահիս նմանօրինակ յանկարծական դէպքերու, քու մատղաշ տարիքէդ իւրացուցած փորձառութիւնդ զքեզ վեր պիտի բռնէ, վեր պատիւով, վեր արժանիքով և վեր բարոյականով:

Մոռցիր հոգիս՝ մոռցիր ա՛ն, որ հիմա զքեզ տղու մը պէս կը լացնէ, երախտապարտ սեպէ ինքզինքդ անոր այս տղայ արարքին որ կատարեալ մէկը անգամ չպիտի կրնար մտածել նոյնը ընելու: Երուանդ՝ այս արարքովը քեզի փրկարար դաս մը տուած եղաւ անգիտակցաբար, օգտուէ անկէ և միշտ յիշէ զինք իբրեւ քու մեծ բարերարդ, այս օր, վաղը և յաւիտեան:

Չարակամութիւն մի մտածե՛ր անոր հա-

մար, ու երբ ճամբան հանդիպելու ըլլաս, բարեւէ զինք կամ մի մերժեր անոր բարեւը. նոյն իսկ այժմ պարագային երբ անձանօթուհի մը տեսնես թեւը. մեծութիւնը, gran-dioseը այդ պարզ մէկ բարեւին մէջն է:

Եւ վերջին խրատս՝ որ կարծեմ թէ չես մերժեր գործադրել, անհետացուր այն երկու կարեւորագոյն բաները, որոնք մինչեւ հիմա կուրծքիդ տակ կը պահէիր, լուսանկարը եւ անոր սերը... Համբոյրներ

ԶԱԶԱ

ՍԻՐՏԻԱՌՆՈՒՈՒՔՆԵՐ

— Օրուան մուսուլին պլուզները:

— Շոգեմաւներու քոռոսը բազմող անկոտորներուն ճանկոտաբար փրփրէր դեմքերին նստող ունկներուն հետ, որոց մօտ այժմ անգամ չեն կրնար ըլլալ ապահովաբար:

— Բերա *solis* ուրմաճիներու քան պլիկնոց խանութներու դուրսը բազմողներու ճախան:

— Կնոջը կամ քոջը հետ դուրս ելողներու կեղծ *սեռիկո* քաղաքներ (անցնէ ճիւղիմ վար):

— Զգլխիչ սրունգներու վերջակէսին վրայ ինկած ժողովրդի մը ճեսարանը:

— Յ. Ալիբաբի երազած տոտիները պարփակող՝ հեմկիի մը բերնին պէս ծուռ քայլերները:

— Երեկ Երզնաւարս, այս օր խմբագիրներու պոյի վեր յօդուածները:

— Գիւտերները տեղերին ընող խլեզ պլանպէսներու յաղաքն ֆոքեզանութեան սլէկալին:

— Ներկայ ամիսին մէջ եւ կամ յաջորդներուն, 120 փլոնց կնոջ մը քով նստիլ... մանաւանդ քաջոններու եւ կամ բռնավայներու մէջ:

— Սառեալի ջուրերը վերելակելու համար աւանակ նստող տիկիները որպէս զի չիյնան, բռնող իշապաններու սխմոտութիւնը:

— Կանանց քան բուսուռային ֆրսիքին հետ խառն սաշկալի պէս մաս մաս դեմքերուն ի վար վազելը:

— Վերջապէս Հանրագիտակի կարգ մը բաժանողներուն ժամանակին լրանալէ վերջ իբր քի խուռնագութիւն ընելու մօտ լուռ մնալին եւ դրամ չուղարկելին ամենէն աւելի սիրտ խառնուով բան է շփալը:

ՅՈՒՈՒ ՅՈՒՈՒ

ԱՄԲԱԿՈՒՄԻՆ ԽՕՍՔԵՐԸ

ԸՍԵ՛՛ ՍԻՐԵԼԻՍ ԶԵՍ ԽՆԴԱՐ ՆԵՐԲ ...

— Գան եւ քեզի աւետան թէ զոքանչիդ լեզուն մեղուն խայթեր է...

— Չմեռը մարդու մը կունակի վրայ գետին պառկելը տեսնաս...

— Տեսնաս մարդ մը, որ գեղանի կնոջ մը թեւին կամիթ մը զարնէ, եւ այդ գեղանի կինը, յանկարծակի, հովանոցին կիթը փակցնէ մարդուն ձեռքին...

— Տեսնաս մարդ մը, որ գլուխը կախ երթայ եւ հեռագրական ձողի մը զարնուի...

— Կարճատես մէկը, որ հագուստի վաճառատան մը առջեւը դրուած փայտէ - մարդու մը մէկը հարցնէ...

— Մարդուն մէկը որ գետին ծռի եւ փայլուն բան մը վեր առնէ դրամ կարծելով...

— Հակիթին մէկը, որ գաւազանը երկու մատներուն մէջ առած դարձնէ, եւ այդ գաւազանին ծայրը մարդու մը գլխուն զարնուի, ու այդ մարդը ետ դառնալով պարոնին ձեռքէն գաւազանը առնէ եւ ... երկու կտոր ընէ...

— Մարդ մը, որուն հետ վայրկեան մը առաջ նստած էիր եւ ֆասուլեա բիպի կերած, ձեռքերը փորին դրած վազէ... տեղը չընելու համար...

— Սեղանի մը վրայ նստած ես, ու դէմի նստող մարդուդ կոկորդը մնայ հացի պատառ մը եւ խեղդուկ ձայնով արձակէ...

— Դեղարան մը գացած ես, ու երբ դեղերուդ պատրաստութեանը կապաւս փայտէ մարդ մը ներս մտնէ ու «ալթմըլլըդ պիր թիւթիւն վէր» ըսէ:

— Բեյքեք մարդու մը հարցնես թէ, «այնինչեանը ո՞ւր կը գտնուի» եւ քեզի պատասխանէ «քօ... քօ... քօ... քօ... վի խախուլթը...»

ԱՆՄԵՌՈՒՄ

ԻԻՖԻԻ ԻԻՖԻԻ ՀԱՎԱՏԱՐ

ԱՇԿԻՍ ԱԼ ԶԵՄ ՀԱԻԱՏԱՐ

[Շար. Էւ վերջ]

Սատանային չարքիս հագցնող կիներն անգամ երբեմն տեղի կուտան այնպիսի չըլլալիք բաներու՝ որոց վրայ մարդ կ'արմանայ կը զարմանայ և պահ մը նոյնիսկ կը փորձուի ընդունիլ սա բացարձակ ճշմարտութիւնը թէ «գառընըն ֆեհնի երբեքի եհն-սի» :

Մարտիկ աղան երբ «կուտեմ քեզի» աչուկու տանտիրուհւոյն բուխ - սիրտ հրաւերը լսեց, կարծես հոն ձգեց սիրտն ու միտքը և որոշեց կերչի պատասխան, ինչպէս կ'ըսեն կեսարացիք, համոզել, լողողել իր զին-նիր բըրան կողակիցը և կրուիլ ... նոյն իսկ եթէ հարկ ըլլար կռուիլ :

Շողենաւով ետ դառնալուն, կամուրջէն մինչեւ տուն, Մարտիկ աղա ֆեօսեմենի պէս առջեւէն իրեններն ալ ետեւէն, որոց բերանները չամաչըրի թէքնէի պէս փրփրած էին, չիտակ տուն կը հասնին ուր կ'սկսի խօսք առեւտուրը այնքան արագ և բարձրաձայն որուն նմանը Գոմիսիոն խանի թէլ-լալ Մուշոնն անգամ չի կրնար կեղծել :

— Աս տարիքիդ հէ՞ ... կեցի սէնի կիտի ... ես ալ գիտէի կոր քի արունդ տու-ուլմիշ է եղեր տէ սիրտս ֆեռան բունէր էի, մէյեր քու ներսիդիս չալխալանմիշ ըլ-լալու չի գար եղէր, տակի թողթուն վրան կ'ելլայ կոր ... հա՛ ... նայէ սոխալը ծան չի հանեցի ամա, հիմա տուննսնք, ըսէ նայիմ հոտածին ինչի՞ն հաւնեցար ... կ'ըսէ Ուստիկ երկու ձեռքը չըլմանցնեմ ... ի պէս մէջ-քին դնելով, մինչ Մարտիկ աղա անկիւն մը քաշուած բլան կը խորհեր իր փրփրած կիներ սինսիւմիս ընելու համար :

— Ելլամ մազիս պոյան թաղեցունեմ, բօտու մը քսեմ, կէօքսէրս թըխեմ, խալչա-լըխըս հաւաճին տամ խապաութիւն ընեմ, երկու էտալը ատըմ օր նետելու ըլլամ նէ

անանկները պէսլէմէ տէյի ետիս ձգած դուրս մը պիլէ քիպիրիս չեմ կերցունէր քի ելլամ...

— Կնիկ կը նայիմ. կոր քի կամաց կա-մաց վրադ սընըր հիլլէթի կուգայ կոր տէ աճապ որ հէքիմին տանիմ տէյի կը մամտամ կոր ...

— Վրաս բարի, սընըր ունիմ, ամա ա-սանկ հաֆիֆ բաներու համար ոտք չեմ հա-նեք ... հելէ քիչ մըն ալ չաբառըղուիինդ տէվամ ըրէ, ան վախտը կը տեսնաս հալըդ...

— Հիմա ինծի նայէ Ուստիկա ... դուք քիչ մը մեղ մինակ ձգեցէք կ'ըսէ Մարտիկ աղան միւսներուն՝ որոնք կեցած մտիկ կ'ը-նէին այր և կնոջ բանակուիւր :

— Կիզլի խաբախը գործ չունիմ ... քուրերս չե՞ն մի, թող երթան հոս գտնուին ... վայ վա՛յ վա՛յ ...

— Ճանըմ էրիկ կնիկ պէլքի բան մը պի-տի խօրաթուի՞նք, չօգ չէ՛յ ... կ'ըսէ. — մինչ կիները դուրս կ'ելլային, ինքը կնոջը մօտ գալով :

— Քա՛ գէվգէկ ... մէյ մը սանկ երեսս նայէ ... հոգիդ ուտեմ, քա պէն սէնտէն պաշկայ քիմէ՞ պագապիրիբիմ ... սիրտս խաֆէս, դուն մէջը պիւլպիւլ ... հոգիս խայիսի դուն մէջը տիւլտիւլ ...

— Տէ՛ ... չի թացիկնանք, տիւլ տիւլը ի՞նչ է ... հայտէ անդին գնայ վրաս միյնար զաթը տաք է ...

— Ա՛խ ճիյէրիս քէօշէն, տիւլ տիւլ տէյի ան ճերմակ թօմպուլ՝ օռդերուն կ'ըսեն, սա ուր է խայիսիին կուտին էթուաֆը կ'ըլլայ նէ ...

— Վա՛յ ... ինծի ոռդի՞ կ'ըլմանցունեն կոր հա՞ ... կայնէ տուն ...

— Քա հոգիդ կերած կնիկս, ոռդ չե-տէ ի՞նչ ես, սա նայէ, միտտ կունտ ու կոր

խայնար խայնար ... տահա ի՞նչ ըսեմ չիյ-
տեմ քի ...

— Էյ ճանրմ հէրիք է պիթըն ... կէշ
կ'ըլլամ կոր ... անդին գնայ կ'ըսեմ կոր
Մարտիկ աղա, ամա՛ն ... գիտես քի էր-
քէկ կատու մը պիլէ ծառքս լկէնէ կէշու-
թին կ'իմանամ ...

— Կը սիրեմ քա՛ ... կը սիրեմ զէվէկ,
կը սիրեմ ամա, շատ հէղ պէլլի ընել չեմ
ուզեր քի կ'ելլաս երես կ'առնես տէյի, չենէ
անանկ հոտած կնիկները ո՛ղիլի քիւմէի պէս
վրաս ուշուշմիշ ըլլան նէ, խապա մը ճու-
րով վար կուտամ ...

— Իրա՛ւ ես աճապ Մարտիկ աղա, աչ-
քիս մէջը նայէ նայիմ ըսելով, միամիտ կի-
նը այնքան կը թուլնայ որ գլուխը Մարտիկ
աղային ուսին կը դնէ և կ'սկսի աչքերը
մարմնեցնել:

— Հիմա ինծի նայէ կնիկ, իմին թոնթոն
Ուստիկ, եկուր սա տունը չի փախցունենք
հէմ աժառն է եղբեր, հէմ ալ տեսա՛ր ես, հա-
վային ուշարը չիգայ ...

— Աղէկ ամա դուն ինչո՛ւ ատտար թէ-
լաշ կ'ընես կոր. առաջ ետղըն կ'ըսէի նէ
օտային օռթան զըպ զըպ կուգայիր, հիմա՛
կը նայիմ կոր քի ...

— Քա մեղք քի թապիյէթս առած չես,
իշտէ անանկ եմ, առաջ նազ կ'ընեմ ետքէն
հազ կ'ընեմ ... ամէն պանին ալ աստանկ
չեմ ըսելով չրթունքները կը մօտեցնէ.

— Տէ ... դռանը բալլիքին ծակէն կը
նային կ'ըլլայ քի ... հիմա ինծի նայէ, կ'եր-
թամ կ'երթամ ամա, մեծ երդում պիտի հա-
նես քի գուլիսէ չպիտի ելլաս, իս տողերու
անկրծակներու չպիտի բերես ...

— Նա՛, լուսահոգի մօրս լէշը օռգերը
ուտին քի էկէր սանկ՝ չէքի կէշ, ծուռ միտք
մը ունիմ նէ ...

— Տահա տահա՛ ...

— Էօլիւմիւղ էտէվէն հէօնկիւր հէօն-
կիւր լամ ...

— Տահա՛ ...

— Սիւլիւկներ փակցունեն մախաթիս
էյեր քեզի դէմ բան մը միտքէս պիլէ ան-
ցունեմ նէ ...

— Վայ վրադ պարի, վրաս փուշ փուշ
եղաւ ... տահա՛ ...

— Ի՞նչ գիտնամ թօմպուլիկս, իշտէ չի-
պաններ հանեմ տէ եառորմիշ ընեմ ...

— Քա ա՛տ ինչ երդում է, անցած տարի
ալ աս ուզեցիր քի բիս արուններդ ելլայ
տէ վրայ գաս տէյի ...

— Տահա՛ տահա՛ ...

— Քէնէ ետքը մեռնիմ տէ քու կակիծդ
քաշեմ ... աչքըս կէօլլիւկ ծառքս տէյնէ-
կով պաշտիմ ...

— Տահա տուվա կայ նէ ըրէ նայիմ ...
հիմա ինծի նայէ քի ըսեմ ես ինքզինքիս
կիւվէնմիշ կ'ըլլամ կոր, պիտի երթանք, աս
տունը պիտի բռնենք, ամա՛ ... Էյեր օր
քիմ պզտիկ կատուի աչք մը, հովի պէս
բան մը տեսնալու ըլլամ նէ, էօլիւմը աշկս
կ'առնեմ խառթալ խուշի պէս երկուքդ ալ
կը կծծեմ հա՛ ... ըսեմ քեզի ...

Մարտիկ աղա որ մինչեւ հոգ կնոջը բաց
թեւերը մասած կ'ընէր, կը ձգէ ձեռքը, տես-
նելով որ գործը եղաւ:

— Ատ ինչ է, հայտէ նայիմ քիչ մը տա-
հա օվուշտուրմիշ ըրէ, բէք հազ ըրի, օխօր
օխօր ...

— Հիմա ինծի նայէ Ուստիկ, վաղուքնէ
թէղը չիգայ կրուինք, զէրէ աս տունը
պաշխասին պոնելու ըլլայ նէ, տուած փա-
րաներնիս պօշը կ'երթայ ...

— Ա՛խ ... ի՞նչ ըսեմ քի մէյմը սիրած
եմ քեզի, մէյմը սիրաւս հօք ըրած է քեզի
համար, ծառքդ վրաս պատցունելուդ պէս
թուռչի կը տառնամ կոր. ա՛խ ... ան քէօ-
միւրճիւ խայտսի աչքերդ տեսա՛ր մի տուն ...

— Ես ալ անանկ կիւվէրճիս, ես ալ ա-
նանկ, ցերեկները խանութին մէջը պօշ վա-
խիթ գտնալուս պէս Ուստիկ Ուստիկ Ուստիկ
տէյի ինքերենս կէօրիւշմիւշ կ'ըլլամ վախիթ
կ'անցունեմ կոր ...

Մարտիկ աղա յաջողած էր:

Երկու օր վերջը բոլորը մէկ կահ կարա-
սինիւր զրկած, իրենք ալ գացած տեղաւո-
րած էին, հակառակ տիկնոջ քոյրերուն՝ ու-
րոնք միշտ սա յանկերզը կը կրկնէին «գա-
րամանըն գոյունը, սօղաւ չրգաւ օյունը»: Ծա-
բաթ մը վերջն է տեսարանը ուրկէ կ'սկսինք
նկարագրել:

Ուստիկ, Կիւլիւկ, Իպրաքսէ երեքը մէկ
սենեակ մը քաշուած կը խօսակցին:

— Փա քուրուկ, քեզի չըսի՞. ամա նա խափա, կենէ պերնիդ լօխման կերար ծառ քովդ թէսլիմ ըրիր ... տէ հրամմէ նայիմ հիմա ինչ պիտի ընես, կ'ըսէ կիւլիւկ երկու ձեռքերը ծունգերուն զրած ու բէշերը սոթթած մէջքին վրայ:

— Ինչ ընեմ ... դուն ըսէ, ինտո՞ր հախէն գամ ... ըրած երգումները իմանայիր նէ ժամը ուսկում պիլէ ընել կուտայիր քի չեղայ վրան կէշութին մը կայ տէջի ...

— Փա շայխըն խազ անոնք խանութպան են ... անոնց երգումը հառըլ հառըլ պերներուն կը վաղէ տիօր օր իրինկուն, տուն ալ հաւտայիր հա՞ ...

— Էյ չէնէ աս գիշեր խըռ մը հաննամ ... հէ Խպրաքսէ ինչ կ'ըսես ...

— Ինծի մնայ նէ գործը ծակելու չէ տէ ուռումի լուրը քաշուելու է, ղէրէ մէյ մը եիւզ կ'օզ ըլլաքնէ սօնը չես կրնար պերեր ...

— Փա կ'ըսեմ կոր քի սա կնիկը վեր կանչեմ տէ աղուոր մը առակեմ, չէնէ մի պէքէյէմ տէ ատ ֆուռթունան էրկանս կըլոսը հրահրեմ:

— Նէ ան ըրէ նէ ան, տուն հիշ թէմբօդ մ'աւերեր, ինծի կուգայ քի գիշերները ազադ վար կ'իշնայ կոր ...

— Հա՞ ֆառդին էմ ամա՞, գիտեմ քի իր հիւանդութենէն է, գիտես տարի մըն է մէշկը թուլ է շան գաւկին ...

— Ը՛. ը՛ ը՛ թուլնայ տէ լիկի ճանաւարը, կայնէ դուն աս գիշեր կէնէ ելլալու ըլլա նէ, օտայէս կ'ելլամ քեզի խապար կուտամ ամա՞ չեղաս պիրտէնպիրէ գող ելլաս կ'ուզես նէ հաւի տոտոխ մը դիր ճեպդ ...

— Անմահա ըրիր հա՞ ... գործը ատ տեղումնքը հասեր է քի ...

— Հասեր տէ ես պիլէ դարձեր է, նա նէ մաճունիութին չուղեր քա, մարդդ ծառքէդ կ'երթայ կոր հէ՞օյ ...

— Կայնէ նայիմ զի՞նս տաղըմիշ եղաւ, հո՞, աս գիշեր գալու ըլլայ նէ հիշ պէլլի չընելով մէթ ընել պիտի պաշլայեմ վարի բօստալը, նայիմ ինչ պիլիմ ճուղապ պիտի տայ, անկէ ալ պէլլի կ'ըլլայ եա՞ ...

— Էյ մէյմը բռօվան ըրէ, տուս ալլահալէմ կուգայ կոր, նա ան է ան, երկու ծառքը տոպրակով դպիսը բռամաթէֆթիդ

տառցեր է ... եռմուռճախս տանիս տէ մահերս վերցունէս հէմէն կէշ հէրիֆ ...

Եւ իրօք Մարտիկ աղա տոպրակներով բեռնաւորուած կուգայ գուռը զարնել որ իսկոյն վարէն կը բացուի:

— Բարի իրիկուն տանտէր հանըմ ... ո՞ւր են մերինները հոս չեն ...

— Հոս են ալահալէմ Մարտիկ աղա, որ սահաթէ վերնէին ամա՞ ...

— Ուստիկ ... եկուր նայիմ սա պաները առ, նայէ քու սիրածէդ բերի ...

— Էյ ասծուքարին, ինչ է ան նայիմ իմ սիրածս ինչ է եղէր ...

— Ձիշէյի պուռնուռնտա քէօրէճիք, թամամ կէս մէթրօ պոյ ...

— Կռողս տանի, ա՞ա ով պիտի ուտէ, իրաւ քի կը սիրեմ ամա, ատ ալ բէք մօս տըռացու է եղեր ... հայտէ թէռլիկներդ հագի տէ վեր ելիր:

«Կուտեմ քեզի» աչուկու տանտիրուհին ձեռքերը ծալած կեցած էր դէմէրնին միշտ Մարտիկ աղայի աչքին մէջը նայելով, մինչ Մարտիկն ալ յայտնի չընելու համար ըսկիւքը չըսկիւքը իրար կը խառնէ խօսակցութեան մէջ ու բոլորը մէկ վեր կ'ելլան:

Ըստ սովորականին Մարտիկ աղա օղիին քեֆսին դրած՝ բաց պատուհանին առջեւ հապուէ կը ճնկէ, հեռուն բաց ծովին մէջէն անցնող բոլոր խաս ձուկերը տեսականօրէն մէղէ ընելով, ու կինը Ուստիկ կամաց կամաց կ'սկսի գաղափարը շտկել ամուսնոյն վրայ, և կասկածները տակաւ կը փարատին, հակառակ իրեններուն տուած ֆիթիլին, զորս միշտ կը լսեր օրն ի բուն:

Օղի, զուարճութիւն և ճաշ շատ կոկիկ և անփոթորիկ կ'անցնին:

Գիւղ գացողները միայն գիտեն թէ քուն ըսուածը, որչափ կանուխէն կուգայ նստիլ արտեւանունքներու վրայ, այնպէս որ դիւղազնացներէն անոնք՝ որոնք հիօ պիօ, շանգաւակ օյինիներ չունին, ժամը երկուքին անկողին կը մտնեն առտուն աքլորներուն հետ աչք բանալու համար. ուստի մերիններն ալ ճաշէն վերջ քիչ մը սանկ նանկ խօսակցելէ վերջ իրենց սենեակները քաշուեցան և դռները շուրջ շուրջ կղպուեցան իրենց կարգին:

* * *

Գիշեր ...

Ընդհանրապէս բոլոր սիրային գաղտնիքները գիշերը կ'աւելնին ու կը յայտնուին, և կարծեմ թէ եթէ չեմ սխալիր, ասոր համար է որ կիներու 80 0|0ը գիշերը զաւակ կը բերեն աշխարհ:

Չորս դին մութ, ամէն կողմ լուռ և ժամը ճիշդ կէս գիշերը քիչ մը անցած է:

Տան մէջ ամէն ոք հանդարտ կը քնանայ, մինչեւ անգամ ժողին տանտիրուհւոյն շնիկը:

Մարտիկ աղայի պառկած սենեակին դուռը մեղմիւ կը բացուի և գերեզմանէն փախած նորաթաղ մեռելի մը պէս ճերմակներ հագած ստուեր մը բոպիկ ոտքերուն մատներուն վրայ կոխելով վար կը սողակի:

Մարդ չիմանար այս հազիւ լսելի ոտնաձայնը:

Ստուերը վար իջնելուն, միջնայարկէն սենեակի մը կիսաբաց դռնէն հոգեւարք հիւանդի մը պէս մազերը ձգած ու գիշերնոցին մէջ շալով մը պատասպարուած կին ըստուեր մը զայն կը դիմաւորէ:

— Սո՛ւս կամայ ...

Երկուքը մէկ վար կ'իջնան, ու պզտիկ սենեակ մը քաշուելով դուռը կէս մը բաց կը ձգեն որպէս զի ո՛ր և է ոտքի ձայն չլսուի:

— Հոգի՛ս ...

— Ա՛խ ճիշերիս քէօշէն, ելանք բռնուլինք նէ ...

— Խերն եմ անիծեր թախ, կ'ըսէ էրիկմարդը, որուն Մարտիկ աղան ըլլալը հասկըցաք կարծեմ:

— Էյ աս ասանկ վախով տողով մեռնիմ պիտի ես, ասոր ճար մը մտմտանք կ'ըսէ կինը, որ ան ալ իր կարգին «կուտեմ քեզի» աչուկու տանտիրուհին ըլլալը կրկնել հարկ չկայ:

Սատանան գիշերը չի քնանար, միշտ արթուն կը գործէ կըսեն, այս ասացուածքը փոխաբերաբար կնոջ համար ալ պէտք է ըսել:

Կիւլիւկ՝ Ուստիկի քոյրը որ Մարտիկ աղան եախաւամիջ ընելու եւ իր միամիտ կընկանը աչքը խոթելու համար, կըռած օրէն ի վեր աչքը գոցած չէր, երբ կը կուահէ թէ Մարտիկ աղա սենեակէն ելլելով վար կ'իջ-

նայ, կամաց մը քրոջը սենեակը երթալով, կ'ուզէ արթնցնել:

— Ուստի՛կ, Ուստի՛կ ...

— Էյ աման տուն ալ աս գիշեր յոգնած եմ, ձգէ աէ ըռա՛սթ ընեմ ... կ'ըսէ կինը ամուսինը կարծելով նախապէս:

— Ուստի՛կ, ես եմ ես ... ելիր մէյմը ...

— Էյ ճանրմ հասկցանք, դրացին ըլլալու չէ՞ ես, դռն ես ամա՛, քուն ունիմ քուն ...

— Քա քուրուկ, ելիր Մարտիկ աղան վար իջաւ ...

Այս վճռական լուրը այնպէս մը կը ցնցէ զինքը որ խնդի մը պէս Ուստիկ, ինքզինքը սենեակին մէջտեղը կը նստէ:

— Կիւլիւկ ... դո՛ւն ես ...

— Հա՛, սուս Մարտիկը վարն է ... տող մ'ելլար, հետս եկուր օտթա խաթի վերտիվէնին կոխէն մտիկ ընենք ...

— Ոտքդ պագնեմ տող կ'ելլամ կոր, պուտ մը ճուր ...

— Էյ տեսա՞ք քի չեղաւ ... ինքզինքդ պոնէ քիչ մը, ետքը ինչ պիտի ըլլաս նէ եղիր, հիմա սըրա՛ն է քա՛ ...

— Էյ հայտէ իջնանք, աման սիրտս ... ըսելով երկուքը մէկ օձերու պէս վար կը սողոսկին՝ մինչ երկու սիրամոլները կը շարունակեն իրենց խօսուըռուը՝ անգիտակից դուրսի եղածներուն:

— Աս ասանկ չըլլար Մարտիկ աղա նայէ քեզի ըսեմ, սիրտս քեզի բէք սիրեց, ես ցերեկները ախդդ քաշելով հիւալ ու ֆէնէո կ'ըլլամ կոր ...

— Քա ճիշերս, ես ե՛ս ... ծառքիս առչընը միւշտէրիններուն քիթը կը խօթէմ կոր, շաշխըն հաւերն եմ տառցեր, մէյէր աս ինչ հով մը կայ եղեր վրադ ...

— Սո՛ւս ... վերէն չիմանան ...

— Իմանան նէ իմանան, աչկս տառցաւ արթըլս, ինչ պիտի ըլլայ, բէք բէք ինծի ձգէ պիտի, ճէհէննէմին պուճախը երթայ, զաւակ չունիմ քի հոգ ընեմ, պիր աչըմ պիր պաչըմ ...

(Դուրսը)

— Կիմանաս կո՞ր, Ուստի՛կ, տահա տուն թառաֆ ելիր ...

— Կայնէ նայինք, տահա լախըստը կ'ընեն կոր, կէշուծին չիգայ ...

— Վա՛յ հաւի կլոխ վա՛յ, տահա՞ ինչ կ'ուզէիր քի ըլլար, աշխօլսուն ...

— Բա մարդը պէլքի ճուր թափելու ելաւ տէ, ա՛ն ալ թախտապէթիէն չէք քնացե՞ր տէ ...

— Տահա չըտկէ չարէ նայինք ... չե՞ս իմանար կոր ի՞նչ կ'ըսէ կոր նէ ... քեզ պիտի ձգէ եղիր ...

— Էյ ինչ կ'ըսես ելլամ երեւամ տէ աղուոր մը ծեծե՞մ սա բօզը ...

— Դուն գիտես ամա միւսթահախ է, ես ալ մէկ կ'ըլլամ էկէր Մարտիկ ճանաւարը թաթ չի վերցունէ նէ ...

— Եկուր քա Կիւլիւկ, իշտէ ես կ'երթամ կոր ըսելով երկուքը մէկ վար կ'իջնան յանկարծ, ճիշդ այն պահուն երբ Մարտիկ՝ օղիէն փայտ կտրած շրթունքները տանտիրուհւոյն այտերուն կը դպցնէր։

Սենեակը զիֆիր մութ՝ աչք աչքի չերեւար։

— Երկու լուսդ քէօնայ ծակիկ ծակիկ ծակծկիս հէմէն կէշ շուն, ըսելով մինչ խելքովը կնկանը վրայ կը վազէ ու կ'սկսի ծեծել, արդէն Մարտիկ աղա և իր տարփածուն կծիկը դրած էին այն գաղտնի սանդուխէն, որ երեքին դռնէն ներս՝ վերի յարկը կը տանէր։

Հիմա տեսարանը անսկարագրելի է։ Երկու կին կը ծեծկուին, մին կռուբի ահագին հարուածներ կ'իջեցնէ իր հակառակորդին, որ խեղճը ցաւէն սերսէմցած և ինքզինքէն ելած կը պօռայ։

— Բա քուրուկ, տիխաթ ըրէ իս կը ծեծես կոր ...

— Նա՛ ... շան դաւակ, նա քեզի էրիկս սիրել, նա՛ ... նա՛ քեզի մարդս ծառքէս առնել ... նա՛, նա՛ քեզի ...

— Ոտքդ պագնեմ Ուստիկ ծեծը ես կուտեմ կոր, կայնէ քիչ մը ...

— Ձգէ, շան ձգնածը սատկեցնեմ պիտի, եղաւ ըլլալիք, նա քեզի կլխաւորս զապդ ընել ... նա, նա, նա ...

— Բա՛ աման մէջքս, քա՛ գլոխս, քա՛ քուրուկ, մնայ, քիպրիթ մը վառէ, եաղւառ հիսապ եղաւ ...

Դիպուածաւ ձեռքերնուն եկած տուփէն լուցկի մը կը վառեն, և ...
...
...
այն ատեն միայն կը տեսնեն թէ ծեծկուողները երկու քոյր են եղեր։

* * *

Վերէն Մարտիկ աղա սանդուխին գլուխը վազելով։

— Ուստիկ, Ուստիկ, ի՞նչ է ատ, գո՞ղ կայ, ի՞նչ կայ, չափուխ ըսէ։

— Ամա՛ն ... սիրտս ... կը պոռայ Ուստիկ ...

— Ամա՛ն ... ոսկորներս ... աման, կը պոռայ Կիւլիւկ, կերած անխնայ ծեծէն քուրջ դարձած։

— Բա վեր եկէք նայիմ ի՞նչ է ատ ... կըսէ Մարտիկ աղա կէս մը վար իջնալով։

— Ախ ... մեր տունին թէքիբը ինէ աղէկ է խաչոր, մէկ համալային կը բռնէր հայվանը ... ես անոր խնտար ալ չեղայ ...

Ու մինչ Մարտիկ աղա, իբր թէ գործին անգիտակ կազը վառած վար կ'իջնայ կնոջը մօտ։

— Դո՛ւքս ճանաւար քեզի, դուրս, աշկըս չտեսնայ ... վաղը Տէր Գաբուէլին խապար պիտի ընեմ, կապածին պէս թող քալէ ...

— Կնիկ ինքզինքիդ եկուր ... ամօթ է տրացիները ի՞նչ կ'ըսեն ...

— Ի՛նչ պիտի ըսես, դաւալը կնիկը, էրկանը կէշուծանը մարեր է պիտի ըսես, տահա ... կիտի սէնի խրոփած սէնի ... քա բիլիճի պէս կնիկդ ձգէ տէ գնայ խառնալային հետ ինկիր ելիր. — Թո՛ւ ... Թո՛ւ թո՛ւ ...

Դիչերը ինչպէս կ'անցնի չեմ գիտեր, սակայն առաւօտուն անոնք որ տունին առջեւէն անցան, անշուշտ տեսան որ չորս հոգի դրան առջեւ կայնած բացուելուն կ'սպասէին։

Բժիշկ մը, քահանայ մը, մահալէին Մխտարը և տանը միջնորդը՝ կաթնապուր աղան։

Բարոյական. — Անոնք որ օղափոխութեան երթալ կ'ուզեն և նիւթականին չի ներէր զատ տուն մը վարձել, աւելի լաւ է իրենց պարտէզին մէջի քիւմէսը նստին, քան թէ անանկ տուն մը որուն մէջը նստելու ստիպուած տանտիրուհւոյ աչքերը, կուսեմ քեզի կ'ըսեն տանը էրիկմարդուն։

ԼԻԼԱ

ԿԻՐԱԿՈՍ ԷՄՄԻՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Ընկեր մ'ունէի անկեղծ վաղեմի
 Զոր կ'անուանէինք Կիրակոս էմմի
 Մարդ մը խիստ բարի ու Աստուածավախ
 Ձէր ուզեր ուտել ոչ մէկու մը հախ
 Օրուան տամներկու ժամերըն ի բուն
 Կ'աշխատէր, գործէր անխոնջ աննըկուն
 Ձէր ամուսնացած ու կ'ապրէր պէքեար
 Զի կարգուելու կ'ըսէր չիկայ բեար
 Ու այնպէս կ'անցնէր Աստուծուն օրը
 Միշտ մտածելով միայն իր փորը
 Վըրան գլուխը թափած թափթըփած
 Ու նոյն իսկ ամօթ տեղերն էին բաց
 Միայն ձեռք մ'ըզգեստ ունէր մէկ հատիկ
 Որ ողջունած էր տամներկու Զատիկ
 Որն որ կը հագնէր օրեր տաղաւար
 Ու միշտ բիացան ժուռ կուգար վեր վար
 Սակայն իրիկուն մը երկու ընկերով
 Գազիճնօն նստած խուժով ու կերով
 Նոյ Նահապետին շատ գործածածէն
 Թաւշանձեանին ալ բանադրածէն
 Կը քարոզէի ու կը ճընկէի
 Զի օր մ'ալ ոտքերս պիտի տնկէի
 Յանկարծ ներս մտաւ մարդ մը չիք բոք
 Կարծես թէ էր նա մի մեծ գրադէտ
 Զեռքերը կանթէ քրավաթ մօտ
 Ոտքերը պօթէ պէխէր բօսօտ
 Մօտենալով մեզ ըսաւ համարձակ
 Կիրակոսն եմ ես արդեօք չի ճանչցա՞ք
 Զարմացանք կեցանք թէ մեր Կիրակոս
 Ինչ կար գալ կենալ այսպէս եկած հոս
 Ըսաւ մտադիր եմ ամուսնանալ
 Ու սրտիս սիրտին չըխընդ բանալ
 Քանի որ հիմա եմ չիք միւտիւ մը
 Ինչո՞ւ չըլլամ ես լայրիս միտի մը
 Որուն համար հոս ժամադիր եղայ
 Մէկուն ոյր ձեռքին տակ շատ մը աղջիկ կայ
 Պատմեց թէ ինչպէս անկուտ ու անփող
 Եղած էր այսպէս կերպարանափոխ
 Ըսաւ թէ օր մը Մահմուտ փաշային
 Դըլուխը խանին մէջ Հանի Շահին
 Անունով կայ մէկ մաղաղա համեստ
 Ուրկէ ապառիկ կը գընեն զգեստ
 Գացի տեսնելու բարեկամ մը հոն

Որուն անուն է ցուրտ եղբայր Սիմոն
 Սակայն և այնպէս սիրուն տղայ մէ
 Որուն նայուածքը սրտիդ գամ գամէ
 Հաթերս հին մին կօշիկս ծակ ծուկ
 Երբոր տեսաւ նա ըսաւ ինձ ծածուկ
 Ով իմ սիրելի բարեկամ յարգի
 Որ զգեստն հաւնիս կոնակդ հագի
 Հագուէ ու շքուէ առ զոյգ մ'ալ կօշիկ
 Ու դարավերջիկ միւտիւ մ'եղիր չիք
 Թէպէտ և գիտեմ չունիս հիմա կուտ
 Բայց կը վճարես չարթէ չարաթ շուտ
 Ու ալ անկէ վերջ գնայ կարգուէ
 Հաւնած աղջկանդ տուր սիրոյ քուէ
 Ամէն մարդ կուտայ չիք մարդու աղջիկ
 Նոյն իսկ երբ ճեպը մեքայիկ մ'ալ չիք
 Ուրեմն ես ալ պիտի ամուսնանամ
 Թառնանանամ Թառնանանամ

Բարոյական. — (Եթէ երբեք ասկէ կ'ելնէ)

Անոնք որք դիմեն առ Հանի Շահին
 Գիտցած ըլլան որ իրենք կը չահին

ԱՂԲԱՏԱՆԻ ԱՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ԵՂԻՍ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԻ մէկ ժողո-
 վըրդական բանաստեղծութիւնը:

Մեր գրական հրապարակին սիրուած
 գրագիրտուհիին Գ. Զարուհիի եղբայրը՝

ԷՏՄՕՆ ՍԷՖԷՐ

Յ. ԱԼՓԻԱՐ

ԳՕՊՈՒ

ԳՌՕՇ

և և

Ճաթիկ ճաթիկ յօդուած մը իշտէ գիտէք
 եւ ... ԼԻԼԱ

Եռաձայնին առթիւ տիրացուական յօդ-
 ուած մը տիրացու ԵՐՄՈՂԷ՝ տիրացուօրէն
 գրուած:



ԵՐԿԱՅՆ ԹԱԹԻԿ

ՏԵԱՐ ՆԱՐՏԵԱՆ. — Անկողնէն դեռ նոր ելած՝ հագուստները կը հագնէի. սաբասը կ'առնէ հագնելէ վերջ ձեռքը գրպանը կը դնէ :

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Անկողնին մէջ ե. երեսը պատահանին դարձուցած կը քնանայ :

ՏԻԱՐՆ ՆԱՐՏԵԱՆ. — (Դրպանը խառնելով) Թօնաֆ բան, երէկ գիշեր աղէկ գիտեմ որ գրպանս երկու քառասունոց կար. հիմակ չկայ ... արդեօք դետինը ինկաւ (գետինը կը ցայ) բան մը չեմ տեսնար կոր (ծունկ կը չոզի եւ կ'սկսի անկողինին փոխերը ցայիլ. եւ գետինը ասդին անդին պրպտելով՝ մինչեւ անկողինին ցակը կը մտնայ) :

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — (Մէկ երկու անգամ կը յօրանջէ) օ... առաւ է եղբոր, մէկ, ո՛վ պիտի ելլայ (անկողնին մէջ կ'ելլայ կը ցայ եւ փոքր ցայելով) աս մարդուկը գացեր է, աղէկ որ գացեր է : Կարպիսը պիտի գայ, գոնէ տղան հանգիստ մը տունէն ներս կը մտնայ... (անկողինէն ելելու կը պատահուի, պարոնը անկողինին ցակէն կամաց մը դուրս կ'ելլայ) վո՛ւյ ... վախճայ նէ ... դո՛ւն ես եղբոր...

ՆԱՐՏԵԱՆ. — Հապա ո՛վ պիտի ըլլար... սակայն չկրցի գտնել վէտէլամ, ո՛ր կ'երթայ քանի որ ես աղէկ գիտեմ եւ կը յիշեմ, երէկ գիշեր գրպանս մէջ ըլլալը...

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Ի՛նչ, նորէն բան կորսնցուցիր. դուն ալ բէ՛ք Թօնաֆ ես, երկու օրը անգամ մը բան կը կորսնցնես...

ՆԱՐՏԵԱՆ. — Դրպանս երկու հատ թէք խուռուշ կար երէկ գիշեր, եւ հիմակ չկայ, ո՛ր գացեր են քանի որ մէկու մը չտուի...

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — (Ինքնին) Արդեօք մէջտեղ պիտի ելլա՞յ... սիրտս նետել սկըսաւ, բարձին տակն ալ դրած չըլլամ նէ...

ՆԱՐՏԵԱՆ. — Տիկին, ո՛ր գնաց երկու դուռը...

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Ի՛նչ, ինձմէ է որ կը հարցնես գրպանիդ դրամները. ո՛վ գիտէ ուր դրեր ես. երէկ գիշեր նորէն խմած եկար...

ՆԱՐՏԵԱՆ. — Հը՛ ... խմած եկայ եւ առո՞ր համար է որ գրպանէս դրամները չկան...

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Այո՛, այնքան դիտով էիր որ քիթիւ ծայրը անգամ չէիր տեսնար կոր...

ՆԱՐՏԵԱՆ. — Ըսելէ առո՞ր համար է որ դրամները գրպանէս յարութիւն առին...

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Առ ի՛նչ խօսքեր են արժանապատուութեանս կը դպիս կոր...

ՆԱՐՏԵԱՆ. — Բառտօն տիկին ... սակայն դրամներս կրնամ հարցնել ձեզի տիկին ... այսինքն սա՛ ըսել կ'ուզեմ որ, դրամներս տեսա՞ք... որովհետեւ հոս մօայ եւ գրպանս մէջն էին դուռնիքը... սակայն հիմակ չկան ... իրաւ է թէ երկու դուռնին խօսքը չըլլար, քանի որ ամբողջ կը ծախսենք կոր, սնանկ չէ՞ տիկին, սակայն դրամները ո՛ր գացին տիկին ... պզտիկ բացատրութիւն մը, խնդրեմ...

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Արժանապատուութեանս կը դպիս կոր պարո՛ն, եւ հիմա՛յ...

ՆԱՐՏԵԱՆ. — Եւ հիմայ կ'ուզեմ որ աս կորսուած դրամներս գտնուի տիկին, որպէս զի հանգիստ սրտով գործի երթամ... օ՛ք... օ՛ք պիտի խենդենամ... ո՛ր գացին ո՛ր գացին ... ո՛վ առա՛ւ ... հասկցայ, սա՛ սենեակին մէջ գտնուածները ամէնը իրար անցնելու է. այո՛ (անկողինին կը մօտենայ եւ սաւանը բռնելով կը փաշ, բարձր գետին կ'իյնայ եւ դրամի ձայն մը կը լսուի... դրամները կ'երեսան. ՆԱՐՏԵԱՆ աչքերը խոռոխոռ բացած տիկինին կը ցայի...)

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Ի՛նչ առանկ կը նայիս կոր աչքիս մէջը, դեռ չհասկցար որ շախա ը ած եմ...

ՆԱՐՏԵԱՆ. — (Չեմքեր ծալելով եւ ականջը տիկինին մօտեցնելով) Հասկցայ, մէյ մըն ալ ըսէ նայիմ, ի՛նչ բրիւ...

ՏԻԿԻՆ ՆԱՐՏԵԱՆ. — Շախա ըրի...

ՆԱՐՏԵԱՆ. — Շախա՞ մի՛, հը՛ շախա ... ո՛չ տիկին ես չեմ ուզեր որ հետս շախա ընես, նամանաւանդ դրամներուս հետ ... արդէն ես գիտէի որ դրամները բառին բուն նշանակութեամբը թռած են ... բայց չէի գիտեր շախա ըլլալը, պիտի խնդրեմ քեզմէ տիկին, որ ասկէ ետքը գո՛նէ գրպանս հետ շախա չընես... մինչեւ հիմակ ըսելէ բաւական մը շախաի գո՛ն եղած եմ եւ ա՛յ կ'ուզեմ որ վերջ գտնէ ... դրամները գրպանս մէջ հանգիստ ձգէ տիկին... : Երկու բան մի ընեն ինձի որ աղէկ օրեր անցնենք, մէյ մը քսակիս հետ մի՛ խաղար, ականջդ բեր որ ըսեմ երկրորդը, (տիկինը չմօտենար պարոնին սակայն պարոնը կը մօտենայ, եւ ականջնի վար կ'ըսէ) մէյ մըն ալ ՊԱՏԻԻՍ հետ հասկըցա՞ր տիկին...

Վ. ԴԵՐԵԳՅԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Վարժարանները քննութեանց ներկայ գտնուելու համար կարգ մը ինքնակոչ հիւրեր, որոնք ցերեկները սրճարաններու մէջ նարտ խաղալով կ'զբօսնէին ասկէ առաջ, առիթէն օգտուելով կ'իմանանք թէ քննիչներու աթոռներ գրաւելով... իրենց անճոռնի հարցերովը աշակերտներու ծիծաղն ալ իրենց վրայ կը հըրաւիրեն:

ԽԱՍ-ԳԻԻԴ. — Թաղական «թաղեցի» մը չի կրնալով թղթակցի մը տուած ստոյգ լուրերը հերքել, սկսած է հոս հոն բերանացի սպառնալիքներ ընել անոր հասցէին. եթէ ես լռեցից քարինկ աղաղակեսցին...

ԷՅՈՒՊ. — Ս. Եղիայի մատաղատօնին մինչ ներսը եկեղեցւոյ մէջ սըրբազան արարողութիւնները տեղի կ'ունենային, դուրսը վարժարանին պարտէզին դիմացի տունը մի քանիներ պատուհանին առջեւ նստած օղի կը ճնկէին, ի գայթակղութիւն բարեպաշտ ժողովրդին: Ժամկոչ աղբարին ուշադրութիւնը կը հրաւիրենք. (Մ. Խ.):

ՄԱԳՐԻ-ԳԻԻԴ. — Նշանը չիչէյի պուռնունտա ետ եղող պոչի ցաւէ խորապէս տառապող Օրիորդ մը, սկսած է ամէն կիրակի Հաճի Միխայիլին պարտէզը յաճախել, առ ի սփոփանք իր մրկած սրտին:

ՆՈՅՆ. — Միւստէ... Յիշեալ օրիորդը իր չեմ գիտեր ինչ առաւելութիւններով այս անգամ յաջողած է չորրորդ ամուսնութեամբը համբաւաւոր մէկը գտնել և կապուիլ անոր հետ: (Ա.

ման սիւսի մը տիխաթ ըրէք փտտուկ չըլլայ. Մ. Խ.):

ՍԿԻՏԱՐ. — Անցեալ գիշեր հոս վանքին այգին երկու սիրակցորդներ երբ մութ տեղը փողոցին մէջ սէր կը հղովէին, պատին տակէն յառաջուց իրենց շուքէն վախնալով, մոխիր դառնաւ և պէքճիին առաջնորդութեամբ տուն դարձան: (Մէկ մէկ քիչ խմցուցէք անքի գիտէք նէ. Մ. Խ.):

ՆՈՅՆ. — Աճի պատէմի երկայնքը իրիկունները տուններու առջեւ հով առնողներէն կը խնդրուի ցած ձայնով խօսիլ, որպէս զի իճատիւցինները հանգիստ քուն քնանան:

ՆՈՅՆ. — Հոս քանի մը տիկիներ ձեռք ձեռքի տալով դիմած են իճատիւի զբօսարանին վարձակալ նշանաւոր վարժապետին իրենց խորին շնորհակալութիւնը յայտնելու, քանի որ իրեն պատրաստած հիանալի պաղպաղակին շնորհիւ, ամուսիննին փոխանակ գինեատուններու մէջ գլուխին տաք-ցուցած տուն երթալու պաղպաղակով զովացուցած կը մտնեն կոր տունէն ներս: (Ասոր կ'ըսեն reclamին ֆիպար. նալ. Մ. Խ.):

1906ի Նաբոյի արուեստահանդէսի ժիւրին գնահատելով եավրուեան — Իսագուլեան Տեարց թէյի խառնուրդները և պահածոյ ընդեղէնները (conserves), առաջին կարգի մրցանակ և ոսկի միտալ տուած է յիշեալ Տեարց որոնք իրենց Պահճէ - Գաբու Ճէլալ պէյ խան թիւ 10 թէյի ծանօթ վաճառատան մէջ ի ցոյց դրած են վերոյիշեալ մրցանակն ու միտալը, վկայագրով հանդերձ:

Արսօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասցէսի թիւ 52.

ՎԱԳՐԻ ՄԸ ՀԵՏ ԱՌԱՆՁԻՆ

ՈՐՍՈՐԴԱՎԷՊ

Ահա առիկ այն մարդը՝ զոր ուղեցի ներկայացնել պատմութեանս մանրամասնութիւններուն մէջ մտնելէ առաջ :

Բաւական ձանձրացուցիչ դնացքէ մը յետոյ հասանք Հոնկկի գետին բերանը, ուր ծովախաղացքի չգոյութենէն՝ ստի գուեցանք խարխիս նետել : Քաղցր ու հրապուրիչ բան մըն է խարխիս նետելը ինծի պէս մէկու մը համար որ նաւու վրայ բնակչութեան ճաշակը չունի : « Յամաք ուր պիտի կոխեմ » ի միակ մտածումը անպատում ուրախութիւն կը պատճառէ, ամէնէն երաշտ հոգը դրախտ կը թափ քեզի, ամէնէն կարծր ժայռը թափիչի մը առաձգականութիւնն ու փափկութիւնը կ'ունենայ :



... Թէ տակաւին որսն կենացը կ'ապրի խմել :

ուրեմն կրնաք երեւակայել թէ ի՞նչ փութկոտութեամբ խնդրեցի բարեկամէս որ ի՛նչի ընկերանայ ցամաք, և որչափ մեծ եղաւ հրճուանքս երբ իր հաւանութիւնը տուաւ : Ծովափը նկարչազեղ ու յանկուցիչ բան մը չունէր. անբեր ու աւաղուտ անհուն դաշտ մըն էր : Բայց իմ երեւակայութիւնս կը ծածկէր զայն ստուերոտ ծառերով, կը պնէր զմրուխտի պէս կանաչ դալարեքով, լեցուն կը գտնէր փետրազարդ թռչուններով և զուարթ ճուղղուններով :

Մեծ մակոյկը ծով լճեցուցին նաւաստիները, երթալ պաշար բերելու համար. քաբիթէն Մաք-Բլէնչըմ ու ես ալ առատ ուտելիք առնելով հետեքնիս՝ երկընցանք մինչեւ ծովեզր, դէպ ի այն պարապ գինիի տակառները զորս հոգ կը զրկէին լեցունելու համար : Պատահեցաւ որ անոնցմէ մէկուն ստիը ինկաւ, և նաւաստիները զայն ցամաքը ձգեցին :

Ես ի՛ կողմէս կարելի եղած զիւրաթեքութիւնը կուտայի սրունքներուս՝ արագ քալելու և չարժեղու համար, և երբոր խնջէնքը զբաւեց զիս, և ակորժակը՝ ճաշի ժամը հընչեց, իմ քաբիթէն բարեկամս ու ես յարմար վայր մը որոնեցինք մեր ընթրիքը ընելու ... Բայց ո՛չ մէկ ծառ կը նուիրէր մեզ իր հովանին :

Քաբիթէնը պարապ տակառը յիշեցուց ... : Ուստի զայն ուղած տեղերնիս գլտորեցինք և անիկա մեզի թէ իբրեւ պատուպարան և թէ միանգամայն իբրեւ յենարան ծառայեց, ու իր ստուերին տակ անփայթ՝ մեր խնջոյքի պատրաստութիւններուն ձեռնարկեցինք :

Մեծ յարձակում մը արդէն դորժած էինք խաշածոյ պաղ վառեակին վրայ և խոզերչիկը դանակին չեղբին տակէն շերտերով կը թուցունէինք, ու ամէնը կը ջրէինք պատուական գինիով մը, որուն քաղցր գոլորչիները մեր միտքը կը բերէին բացակայ հոմին յիշատակը, հեռաւոր սէրերու կարօտը ... : Երկուքնիս ալ բաժակներ պարպած էինք բարեկամներու, ազգականներու կենացը : Ազգականներու և բարեկամներու ցանկը աւարտելէն վերջը, կը փնտռէինք թէ տակաւին որուն կենացը կրնայինք խմել ... Քաբիթէնին նոր նոր միտքը ինկած էր մօրաքեռորդի մը որդին, Սկովտիոյ խորերէն, որուն վրայ եբքէք մտածած չէր իր ճամբորդութենէն առաջ և կը պատրաստուէինք քաբիթէն Մաք-Բլէնչըմի այդ մօրաքեռորդին զաւկին կենացն ալ խմել, երբ ... երբ

Ո՛հ, հոս, պէտք է որ կանգ առնեմ, — ըսաւ Պ. Ռօպէր, — պէտք է որ քիչ մը կենամ ... երեսո՛ւն տարի է որ լսած եմ այն գոչիւնը որուն վրայ պիտի խօսիմ ... և միշտ հոն է ... միշտ հոն ... ներկայ, ականջիս մէջ ունիմ դեռ անոր անուելի երաժշտութեան չափաբերութիւնը, դժոխային աստիճանաւորումը ...: Չկայ բառ մը պատկերայնելու համար այդ աղմուկը, ո՛հ, տակաւին կարծես կը սարսռամ ... երեւակայեցէք սաար հազար հարբուխ եղած սատանաներ, որոնք կը խորդան ու կը մալտան խուլ կերպով քենէ կրեք քայլ անդին ... ո՛վ պիտի կարենար զայն մոռնալ անգամ մը լսելէ վերջ ... ո՛վ պիտի կրնար նաեւ զայն հասկընալ, առանց խնայած ըլլալու ...:

Քարթիթան Մաք-Քլէնշըմ բաւական մը յաղթելով իր յուզման՝ կրցաւ ինծի պօռալ. «նայեցէք, Ռօպէր, ա՛խ Աստուած իմ, ուշադրութիւն ըրէք»:

Քարթիթէնը ոստում մը ըրաւ, որ թեթեւութեան տեսակէտով կրնա՛ր գերազանցել մեր լեռներուն այծերը և անգլիական վէպերուն ուրուականները, ու սոքի վրայ կեցաւ, տակաւին ետին: Ես ալ բարեբախտաբար ժամանակ ունեցայ միանալու բարեկամիս, ու իր քովը կենալու, մեր արագ ու մտացի գործողութեան անուելի շարժառիթը եզոզէն հաղիւ երկու քայլ հեռու, որ կը ներկայանար ... յանձին յաղթամարմին և ոտակասեօլ վազրի մը, կամ աւելի ճիշդը՝ է՛գ վազրի մը: Յետոյ առիթ ունեցանք, ինչպէս պիտի տեսնէք, մեր հակառակորդին սեռը ճանչնալու:

Այլեւս անարկու մարտը սկսած է. մնամարտը երեքի մէջ, բնաջնջումի մնամարտը: Մենէ ոչ ոք, ոչ քարթիթէնը, ոչ վազրը, և ոչ ես ուսանի դիրքի մէջ գտնուած էր: Էգ վազրին հետ առանձին էինք այսպէս:

... Իբրեւ պատերազմի դաշտ կար անապատը, իբրեւ պատնէշ ստակաւ մը, իսկ իբրեւ զէնք՝ մեր ճարտարութիւնը: Ահաւասիկ ա՛յս էր դիւքերնիս:

Ինչպէս վազրը կրցած էր մինչև մեզի հասնիլ ու մնալ կասկածա՛ծ իսկ չէինք իրենր-կալութիւնը: Այս անապատին մէջ մուկ մը իսկ, ծառ մը, թիթի՛ մը, սկօս մը չպիտի զբաւ-նէր պահուըտելու համար ... առիթը չէր, և ոչ ալ հիմակ, ճաւելու վայրի կ'ընդանին վազրի արագութեան մասին: Չե՛մ մտածած դեռ կարդալ ինչ որ բնապատումները գրած են վազրին նկատմամբ, որոնք ինծի չափ մօտէն տեսած չեն զայն. սպազային կը տեսնենք իրենց գրածը: Հիմակ վերադառնանք մեր տակաւին:

Քարթիթէնը և ես, ուրիմն, կը դառնայինք տակաւին շուրջ, այն տեսակ յուզմամբ մը, զոր անհնար է բացատրել:

Յոյսի նշոյլ մը ունեցանք: Թերեւս վազրը մեր ճաշին մնացորդներուն պիտի տիրանար, իր ախորժակը պիտի գոհացունէր անոնցմով և այդ պարագային՝ պիտի անգօսնէր մարդկային աւարը: Ինչ ողորմակ միտարութիւն Աստուած իմ: Երկու երկվայրկեանի զազար մը մեր պաշարներուն տուել միջոցը պիտի հայթայթէր մեզի միտքերնիս ամփոփելու և անձնապաշտպանութեան միջոց մը ստանալու:

Յուսախաբութիւն: Վազրին աչքը շնչաակի յառած էր մեր վրայ, ա՛խ այդ նայուածքը որ արիւննիս կը ցամքեցունէր մեր երակներուն մէջ: Մենք երկուքս միակ որսերն ու ճաշն էինք զորս կը տենջար ունենալ, զորս խելայեղօրէն կ'ուզէր ըմբռնել հիմայ ...

[Շարունակելի]



Երեմիս ալ Շարունակեցինք մեր բռնութիւն դարձր
սակաւին շուրջ

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՈՅՐԱԵՆՆԱԾ


Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ ԸՆԿ.

Կ. Պոլիս, Սուրբան Համամ, Թոփաչեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիւք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—41



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍՍԳՈՒԼԵԱՆԻ

Ճեյալ պէյ խանին
տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատչային:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական. և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ զոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաև անուններու սկզբնատառով զոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձև շղթայներ, տոնացմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և շափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաև մուշամպա վերաթիւսներ, բուրդէ և մետաքսէ շրջագոգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաև խասա, ամբրիզան, պամա, ևւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաև կարի (ձօնս. Նովման) և այլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշկով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ևւն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաց տոկոսութիւնը, նրբութիւնը և աժաճութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻԻ 13

50—30



ՌԵԻՆԵԼՔ ՕՐԱՆՈՒՅ

ԹԵՐԹ ազգային, գրական և քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրոշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.:
Զեռքէ վաճառում՝ տասը փառա: Հասցէ՝ Ղալաթիա, Քամանոս փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով,

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական ևւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնոթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսապիտութիւն մը կը կազմեն: